

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ. 2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 4062.0 հազ. տոննա, որը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ նվազել է 7.9 տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 2060.6 մլն.տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 11.7 տոկոսով:

2000թ. հունվար-նոյեմբերի, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ.հունվար-նոյեմբեր	2000թ. հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով	2000թ. նոյեմբեր	2000թ. նոյեմբերը 2000թ. հոկտեմբերի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	4062.0	92.1	485.2	111.4
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	1283.3	101.2	191.8	194.5
արտահանվել են բեռներ	171.6	107.8	23.7	2.2 անգամ
ներկրվել են բեռներ	807.8	114.8	127.3	2.7 անգամ
ներհանրապետական փոխադրումներ	303.9	75.0	40.8	127.1
ավտոտրանսպորտով	1880.6	80.1	218.8	88.8
արտահանվել են բեռներ	58.3	69.5	20.5	5.0 անգամ
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	15.5	98.7	6.3	9.0 անգամ
ներկրվել են բեռներ	226.3	102.8	33.8	142.0
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	44.0	96.5	3.5	85.4
ներհանրապետական փոխադրումներ	1596.0	87.1	164.5	75.3
օդային տրանսպորտով	11.9	103.5	1.1	78.6
արտահանվել են բեռներ	5.2	129.2	0.4	80.0
ներկրվել են բեռներ	6.7	90.0	0.7	77.8
խողովակաշարային տրանսպորտով	886.2	113.0	73.5	82.4

Երկաթուղային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ աճել է 1.2 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 62.9 տոկոս (1999թ. հունվար-նոյեմբերի 55.5 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 13.4 տոկոս (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 12.5 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 23.7 տոկոս (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 32.0 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-նոյեմբերին 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ քարածխի փոխադրման ծավալն ավելացել է 44.0 տոկոսով, հացահատիկի և աղացվող մթերքներինը՝ 34.5 տոկոսով, սև մետաղներինը՝ 7.9 տոկոսով, իսկ անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն) փոխադրման ծավալը նվազել է 54.5 տոկոսով, սև մետաղների ջարդոնինը՝ 49.7 տոկոսով, ցեմենտինը՝ 38.7

տոկոսով, նավթ և նավթամթերքների՝ 34.9 տոկոսով, հանքային շինարարական նյութերին՝ 31.4 տոկոսով և քիմիական ու հանքային պարարտանյութերին՝ 13.6 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 31.6 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 28.7 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-նոյեմբերին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ աճել է 9.4 տոկոսով՝ կազմելով 315.8 մլն. տոննա-կմ: Վազոնների միջին օրական բեռնաթափումը հունվար-նոյեմբերին կազմել է 51 վազոն և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նկատմամբ նվազել է 3 միավորով, իսկ բեռնումը 6 միավորով և կազմել 24 վազոն: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 11.6 օր և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ արագացել է 0.8 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1880.6 հազ.տոննա (1999թ. հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 17.9 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 12.0 տոկոս (1999թ. հունվար-նոյեմբերի 9.4 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 19.4 տոկոս (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 20.7 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 3.1 տոկոս (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 3.6 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 26.6 տոկոս (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 18.7 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներին՝ 84.9 տոկոս (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 87.0 տոկոսի դիմաց): 2000թ. հունվար-նոյեմբերին բեռնաշրջանառությունը կազմել է 36.0 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 9.5 տոկոսով:

2000թ. հունվար-նոյեմբերին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 46.3 տոկոս՝ 1999թ. հունվար-նոյեմբերի 53.2 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 11.9 հազ. տոննա (1999թ. հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 3.5 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 56.3 տոկոս (1999թ. հունվար-նոյեմբերի 65.2 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 43.7 տոկոս (1999թ. հունվար-նոյեմբերի 34.8 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 8.6 մլն.տոննա-կմ և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 25.2 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ մնացել անփոփոխ:

Խողովակաշարային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներկրվել 886.2 հազ. տոննա բնական գազ և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի համեմատ աճել՝ 13.0 տոկոսով, բեռնաշրջանառությունը՝ 13.0 տոկոսով և կազմել 1700.2 մլն տոննա-կմ: 2000թ. հունվար-նոյեմբերին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 21.8 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 17.8 տոկոսի դիմաց:

Ուղևորափոխադրումներ. 2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոց-

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

ների գործունեության գնահատման, ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 120079.8 հազ. մարդ, որը 1999թ. հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 1.7 տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 1860.1 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 4.0 տոկոսով:

2000թ. հունվար-նոյեմբերին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ. հունվար-նոյեմբեր	2000թ. հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով	2000թ. նոյեմբեր	2000թ. նոյեմբերը 2000թ սեպտեմբերի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	120079.8	98.3	10614.8	96.9
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	1003.4	79.7	99.7	110.0
ավտոտրանսպորտով	90815.3	101.9	7736.7	97.0
օդային տրանսպորտով	543.8	95.0	49.1	93.0
Էլեկտրոտրանսպորտով	27717.3	88.9	2729.3	96.2

2000թ հունվար-նոյեմբերին, ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.8 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համապատասխան ցուցանիշի 1.0 տոկոսի դիմաց, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 75.6 տոկոս, նախորդ տարվա 73.1 տոկոսի դիմաց, օդային տրանսպորտինը՝ 0.5 տոկոս և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ, իսկ էլեկտրոտրանսպորտինը՝ 23.1 տոկոս, նախորդ տարվա 25,4 տոկոսի դիմաց:

Երկաթուղային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ նվազել է 20.3 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 43.2 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.9 տոկոսով:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ ավելացել է 1.9 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 1193.1 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 1.7 տոկոսով:

Օդային տրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ օդային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 543.8 հազ. մարդ, որի 49.3 տոկոսը (268.2 հազ. մարդ) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը: Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 1.6 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 1.2 տոկոսի դիմաց):

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 516.3 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 12.6 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտ. 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով

փոխադրված ուղևորների թվաքանակը կազմել է 27717.3 հազ.մարդ և 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ նվազել 11.1 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 115.4 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 10.6 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-նոյեմբերին կազմել է 50.9 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 30.9, տրամվայով՝ 16.9 և ճոպանուղով՝ 1,3 տոկոս:

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է ճանապարհային պատահարների 841 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 9.5 տոկոսով: Պատահարներից զոհվել է 184 և վիրավորվել 1052 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխանաբար՝ 205 և 1132 մարդու դիմաց: